

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ՇՆՈՐՀԱՎՈՐԱԿԱՆ ՀԵՌԱԳԻՐԸ ՎՐԱՑԱԿԱՆ ՍՍՀ ՄԻՆԻՍՏՐՆԵՐԻ ՍՈՎԵՏԻ ՆԱԽԱԳԱՀ ԳԻՎԻ ՋԱՎԱԽԻՇՎԻԼՈՒՆ՝ ՍՈՎԵՏԱԿԱՆ ՎՐԱՍՏԱՆԻ ՀԻՍՆԱՄՅԱԿԻ ԱՌԹԻՎ

Թբիլիսի

Հանուն հայ եկեղեցու և հավատացյալ ժողովուրդի երջանիկ ենք շնորհավորանքի և ամենաջերմ ու բարի մաղթանքների Մեր խոսքը բերելու Ձեզ և եղբայրական Սովետական Վրաստանին՝ նրա վերածննդյան հիսնամյա տոնակատարությանց այս օրերին:

Վստահ եղեք թե Սովետական Հայաստանի հայերի հետ միասիրտ, նաև արտասահմանի մեր երկու միլիոն հայերը ջերմ սրտով ողջունում են ձեր մեծ տոնը՝ ուրախանալով վրաց տաղանդավոր ժողովուրդի վերելքով ու ծաղկումով:

Հավետ փա՜ռք և օրհնությո՜ւն Վրաստանին:

Հավետ բարեկամությո՜ւն և գործակցությո՜ւն վրաց և հայ ժողովուրդների միջև:

ՎԱԶԳԵՆ Ա
ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

14-ը մայիսի 1971 թ.,
Ս. Էջմիածին